Պարույր Սևակ

Անխորագիր

...Ես նոր մի պոետ, անհայտ տակավին,
Խոհերի անտես մակույկին նստած՝
Չգիտեմ արդյոք կլինի՞ քամի,
Որ առաջ մղի իմ առագաստը,
Թե ինքս պիտի շապիկն իմ՝ կայմին
Առագաստ շինեմ, նոր լինեմ վստահ,
Որ երգն իմ նորեկ, նավը իմ գանձի
Պիտի ընթանա օվկիաններն ի վեր
Եվ փոթորկածուփ ծովերում անծիր,
Որպես գալիքի անմարմին նվեր,
Պիտի շնչով իր անանձնապատկան
Վառվի որպես վեհ, սրբազան պատգամ...
Մեր երկրի վրա կախվել են ահեղ
Օրեր՝ մառ ու մութ և դաժան կարի
Ցանկալով մահվան թույնով վրդովել
Հանգիստը երկրի մեր չնաշխարհիկ...
Եվ ելել ենք մենք մեր այգաբացով,
Մեր ուժով համակ, վաստակով արդար,
Ջնջելու չարիքն այդ արյունացոլք,
Կոտրելու վերջին այդ կեռը խարդախ,
Վերջին տերերին այն ժանտաբարո

Եվ իշխաններին բոլոր այն արբշիռ
Խեղդելու իրենց իսկ արնակարոտ
Հատուցման ծովում - անտես, անկշիռ...
Արդ ժամն է հասել, գնում եմ ես էլ
Դեպ մարտնչող մեր այն բազմագունդը,
Ուր մահը անվախ սրտեր է տեսել,
Ուր ուռճանում է հաղթության հունդը...
Գիտեմ, որ մահը շռայլ է այնտեղ
Իր դառնապատիր զգվանքների մեջ,
Եվ տևողությամբ մի ակնթարթ է,
Շատ կարելի է գտնել մահվամբ վերջ...
Ուրեմն գունատվի՞ հերոսությունն իմ,
Եվ գոյությունն իմ դառնա մի առա՞նցք,-
Վախկոտության հին մազութով յուղված...
Ուրեմն դալկանա՞ մահվան պաղ շնչից
Արհամարհանքն իմ՝ սին մահվան հանդեպ,
Եվ մոլեգնակամ վրնջող իմ ձին
Դառնա նապաստակ - վախկոտ ու անդե՞մ...
Օ՜, ո՛չ... թող լինեմ Կապլան էսերական -
Իմ առաջնորդի կյանքի դեմ դավող,
Եթե առկա է երգիս շեփորին
Այսօր կեղծիքի շպար կամ օքսիդ,
Եթե անապակ երգիս սափորին
Կաթում է անջինջ, պղտորող մի շիթ...
Գնում եմ այնտեղ և սարսում չունեմ
Ես մահվան հանդեպ - մոլի և անգութ...
Իմ անվախության սրտերն աճում են
Իրար հաջորդող օրերի հանգույն:
Գունատվիր, ով մա՛հ... Չարագույժ ագռավ,
Դու աներևույթ, անտես բորենի,

Անգոյության հուր - աննյութ, անկրակ,
Դու թունոտ անչար, տեսքով ցորենի...
Դու, որ անտես ես, դու, որ աննկատ,
Դու, որ անձև ես չար կասկածի պես,
Խանդի պես սնվող - անստինք, անկաթ,
Վրեժի նման անվրեպ այնպես...
Դու, որ կասկածի, վրեժի, խանդի
Նման շարժվում ես աննկատ, անկանգ,
Սակայն նրանց պես, կաս հնուց անտի
Որպես սրտերի փորձության փականք:
Գունատվիր, ուրեմն, դալկացիր, սողա
Խլուրդի նման կամ ինչպես սողուն,
Եվ իմ (օ՛, ո՛չ, մեր) շնչից դողդողա,
Մալարիայից են ինչպես դողդողում...
Դու, որ գոյության բյուր հազար կանթեղ
Մարել ես դաժան քո սառը շնչից,
Դու, որ եղել ես հաղթական, քան թե
Քո որդին - կյանքը՝ քո հանդեպ չնչին,
Արդ պիտի փոխենք հին դերերը մենք
Ներդաշնակությամբ օրինածնիչ,
Եվ պիտի դողաս ինձանից, ով նենգ,
Ինչպես կանթեղը սառն ածխածնից:
Քանզի ես ահա գալիս եմ քո դեմ
Հոգուս մեջ ծիծաղ, բաքոսյան խնջույք,
Մի վակխանալիա, մի ուրախ հանդես,
Մի աստվածային խրախճահաճույք...
Քանզի ես ահա գալիս եմ քո դեմ
Գիտցած լինելով ինչո՞ւ եմ հագնում
Քո քղանցքը սև և իրանապիրկ,
Ինչո՞ւ եմ այսքան շատ վաղ հավաքում

Դեռ նոր բաց արած ծիրանահագի
Առագաստը իմ, այս ուրախ կյանքում...
Գնում եմ ես էլ ցանեմ մի հատիկ
Այն գալիքնահունձ լայն մարգագետնում,
Որ չըդառնա մեր աստղը մահատիպ,
Ժանտաժանտ, դժնի աշխարհի մթնում,
Որ անծիր երկնում մեր բազմաաստեղ
Օտար մի թռչուն խենթ չսավառնի,
Որ կարմիր ոգուն մեր չըպատվաստեն
Ոչ մի գոսական ճյուղ, ոստ եղեռնի,
Որ կապուտաչյա ջրերում մեր ջինջ,
Օվկիանոսներում անգամ սառցանիստ
Ոչ մի խորթ մակույկ, առագաստ ոչ մի
Չըլողա, այնտեղ չգտնի հանգիստ,
Որ հայրենիքիս արդարավաստակ
Հողը մի օտար ոտք չըտրորի,
Որ այնտեղ մարդը՝ հոգով անկաշկանդ
Գալիքի հազար հույսեր օրորի,
Որ ցուցամատը մեծ առաջնորդի
Նորից ու նորից մնա ուղենիշ,
Որ միշտ ժպիտով ճանապարհորդի
Մեզ դեպի կարմիր հաղթության ֆինիշ...

22-23.VII.1941թ.
Նավչալու